Ղուկաս սև մօրուքով է, նստած. հագել է կարմիր կապայ և վերան ձգել կանաչ տոգայ. աւետարանը բաց, հետևեալ խօսքերով. «Սա չէր միաբա | ... հուրդս | ... գործս նոյ | յԱրիմաթիայ | քաղաքէ հրէ | ից որ եւ ինքն | իսկ ակն ունէր | արքայութ | ան || սա մատուցել առ Պիղատոս խնդրեաց զմարմինն յի | եւ իջուցել | զնա պատ | եաց պաստառակա»։ Աջ կողմից, ներքևը, նկարուած է սեագոյն եզը։

Յովհաննէս հագել է կանաչ կապայ և կարմիր վերնազգեստ, անմօրուս, սև երկար մազերով. ձախ կողմից թեատարած արծիւ և բաց աւետարան։

Պատկերների միջին տարածութիւնը ծաղկազարդուած է ոսկեգօծ մակերևոյթի վերայ. ծաղկազարդուած են նոյնպէս պահարանի կողքերը, կապոյտ և կարմիր մեխականման ծաղիկներով։

Ներքևում գրուած է չինողի յիշատակը.

«Շինեցաւ եւ ծղկցաւ պ̅ր̅ն սրբ | Ամենափրկչիս արգեամբք նն | Սիմէոն սրգն կթղկսի սպասաւոր Մկրտիչ վրդպետին ի յշ̅ակ ին | քեն ծնղցն իւրոց Սարգսին եւ Մարթային եւ եղբրցն, Պողոսին, Ղուկա | սին եւ Յոհանին, եւ քեռն Մարիամին եւ | նմ ննջեցլոցն իւրոց ի ամ̅ի թուոջ»։

Փեղկերի վերայ ներսից հետեւեալ պատկերները կան. ձախից խաչելութիւնն է, որի աջ կողմից Մարիամն է կանգնած և ձախ կողմից Յովհաննէս, ուրեմն, բարեխօսի սովորական խմբանկարը։ Մարիամ հագել է կարմիր ներքնազգեստ և վերան ձգել կապոյտ վերնազգեստ գլխանոցի հետ. Յովհաննէս դեղնա–կանաչաւուն կապայ, կարմիր վերնազգեստով։ Խաչելութեան յետևից երևում է Երուսաղէմը, իսկ խաչի տակ Ադամի գլուխը։ Խաչելութեան դիմաց միւս կողմից հրեշտակն է դեղնա–կանաչաւուն ներքնազգեստով և կարմրաւուն կարճ թևանի վերնաշապկով. մի ձեռքին գործիք (?) և աւել, միւսին նիզակ և ձող՝ գլխին սպունգ, ներքևում մուրճ և աքցան։

Ներքևի տեսարանը ձախից աւետող հրեշտակն է, ձեռքին ծաղիկ բռնած և խօսելու շարժումով. նորա դիմաց միւս փեղկի վերայ Կոյսն է, ձեռքերը խաչած և ծընկաչոք. հագած է կարմիր ներքնազգեստ և վերան ձգած կապոյտ կրկնոց գլխանոցով. գօտին ոսկեգօծ է. առաջին գրած է բաց Սաղմոս հետեւեալ տողերով. «Ի ջեղէ | ոսպ զանձ | բեւ ի վր գեղ | ման սոպ ըզ | ցօղ, զի ցօղէ | յերկիր | ծա | գեսցի յաւ | ուրս նր արդարուի | բազում խա | ղաղութի | մինչեւ կատա | բեսցելուս»։

Պատկերների միջի տարածութիւնը՝ ոսկեգօծ մակերևոյթի վերայ՝ ծածկուած է կանաչ, կապոյտ, կարմիր գոյների ծաղկազարդերով, էջմիածնի տաճարի ծաղկազարդման մօտաւոր ոճով. պահարանի պատկերագրութիւնն էլ հնից արտանկարութիւն չէ, այլ 1778 թուի, այսինքն պահարանի շինութեան ժամանակի արդիւնք։

Ը.

Սոյն պահարանի մէջ է գետեղուած Ամենափրկիչ կոչուած փայտակերտ սրբութիւնը, որ խաչից իջեցնելու տեսարանն է. պատկերը հագցրած է մի քառանկիւնի հարթ տախտակի մէջ, որի երկարութիւնն է 72, լայնքը 32 և հաստութիւնը 2½ սմ.։ Տախտակը շրջանակուած է հիւսկէն օրնամենտով, վերևի և ներքևի կողերը մի, իսկ աջ և ձախ կողերինը մի այլ տեսակ. խաչելութեան աջ կողքից շրջանակի մի մասը, խաչի հորիզոնական թևից վերև, կտրուած է (պատկ. 17)։ Երկու տեսակ զարդարանքներն էլ մեր ճարտարապետական և ապամանրանկարչական արուեստների մէջ յաճախ երևան եկող մոտիւներ են, զոյգ գլծերի հիւսուածք, միայն տարբեր ձևերով, ընդհանրացած ԺԳ. դարում իւր քանդակման այս եղանակով, իսկ ծագմամբ ոչ վաղ քան ԺԱ. դարը։

Տախտակի փայտը, որի մէջ հագցրած է պատկերը, զանազանւում է բուն խաչելութեան փայտից, թէ՛ գոյնով և թէ՛ համեմատական նորութեամբ, նորոգուած ձախ կողմից։ Բուն խաչն էլ իւր ֆիգուրներով բոլորովին անաղարտ չէ հասել մեր ձեռքը. վերին ձախ անկեան վարդեակը տար-